ԲԱՐԵՊԱՇՏ ՄԱՀՄԵԴԱԿԱՆԻ ՎԱՐՔԱԿԱՆՈՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արաքս Փաշայան

Յուրաքանչյուր ժողովուրդ ունի մարդկային կատարելության կամ բարոյական իդեալների սեփական պատկերացումները: Այս տեսանկյունից, իսլամական հասարակության մեջ անհատի բարոյական նկարագիրն անմիջականորեն ենթակա է իսլամին, որ խոր հիմքեր ունի հասարակական կյանքում և անհատի գիտակցության մեջ: Մահմեդականի վարքականոնն անմիջականորեն կապված է իսլամական արժեքային համակարգի հետ: Ի տարբերություն արևմտյան անհատապաշտական հայեցակարգի, իսլամում անհատական ես-ը էապես զիջում է համայնքային ես-ին:

Բարոյականության իսլամական չափորոշիչներն ամրագրված են Ղուրանում, սուննայում, շարիաթում և իսլամական այլ աղբյուրներում:

Մուհամմադի մահից հետո նրա հետևորդներին բնորոշող եզրերից սկսեց օգտագործվել *մուսուլմանը,* այսինքն՝ նա, որ հնազանդ է Ալլահին: Շրջանառվեց նաև *մու'մին* (հավատացյալ) ձևը: Թե՛ *հավատացյալ* և թե՛ *մուսուլման* հասկացությունները ծանրաբեռնված են որոշակի բարոյական նորմատիվներով:

Դեռ վաղ շրջանից իսլամական տարբեր հոսանքների ու ուղղությունների միջև թեժ բանավեճ էր սկսվել, թե ում պետք է համարել ճշմարիտ *հավատացյալ* և ում՝ *մուսուլման:* Սակայն իրականում նրանց միջև սահմանազատումը պայմանական է, քանի որ դրանք հոմանիշներ են: Ասվածի ապացույցն են այս առիթով հադիսներում պահպանված Մուհամմադի խոսքերը: Նա նշում է, թե *հավատացյալները* պետք է հավատան Ալլահին, նրա հրեշտակներին, նրա հետ հանդիպմանը, նրա առաքյալներին, նրա հարությանը: Իսկ *մուսուլմանը* պետք է երկրպագի Ալլահին, ոչ մի բան չհավասարեցնի նրան, աղոթի օրը հինգ անգամ, զաքաթ (տասանորդ) վճարի, ծոմ պահի, ուխտագնացություն կատարի:

Հադիսներում ճշմարիտ կամ բարեպաշտ մուսուլմանի արժանիքներից են առատաձեռնությունը, բարությունը և գթասրտությունը, անկեղծությունը, ճշտապահությունը, ներողամտությունը և հարգանքը:

Առատաձեռնության գաղափարը բխում էր Մուհամմադի քարոզած՝ հավատացյալների հավասարության սկզբունքից և ներկայացվում որպես աստվածահաճո գործ, որ անպայման պետք է փոխհատուցվի: Ղուրանում նշված է. «…Ինչ ծախսում եք ձեր ունեցվածքից, այդ ձեզ համար է… այն ձեզ կփոխհատուցվի, և դուք նեղացված չեք լինի» /2:272/:

Ընդհանրապես, ծախսեր կատարելը հանուն համայնքի կարիքավոր անդամների իսլամում վերաճեց ողորմության բաշխման՝ *սադակայի* ինստիտուտի: *Սադական* արտահայտվում է նյութական և ֆիզիկական օգնությամբ:

Բարությունը և գթասրտությունն ընկած են մուսուլմանների փոխհարաբերությունների հիմքում: Հադիսներում նշված է. «Եղիր գթասիրտ նրանց հանդեպ, ովքեր երկրի վրա են, և քո հանդեպ կլինի գթասիրտ Նա, ով երկնքում» է: Գթասրտությունը ենթադրում է բարություն, ինչպես նաև հակառակը: «Բարությունից զրկվածը զրկված է նաև գթությունից»:

Անկեղծությունը մուսուլմանի բարոյական նկարագրում նույնպես կարևոր հատկանիշ է: Ղուրանում և հադիսներում առանձին ուշադրություն է դարձվում հավատացյալների *ճշտապահության,* մյուս հավատացյալների հանդեպ ստախոսության և կեղծավորության կանխման հարցերին: Իսլամը կոչ է անում հավատացյալներին պահպանել ձեռք բերված համաձայնություններն ու պայմանավորվածությունները /5:1/, հավատարիմ մնալ խոստումներին, ինչի համար հարցվելու է /17:34/: Կեղծավորությունը և խաբեությունը նմանատիպ և անընդունելի արատներ են, որ հավատացյալին շեղում են ուղիղ ճանապարհից և տանում դժոխք: «Իրոք, կեղծավորները հայտնվելու են դժոխքի ամենահատակին, և չես գտնի նրանց համար օգնական» /4:145/:

Բարեպաշտ մահմեդականը պետք է խուսափի նաև բամբասանքից: Մարգարեն ասում է. «Բամբասողը չի մտնելու դրախտ»:

Բարեպաշտ մահմեդականի համար կարևոր հատկանիշ է ներողամտությունը: Իսլամը հավատացյալներին կոչ է անում համբերատար և ներողամիտ լինել միմյանց նկատմամբ: Մարգարեն ասում էր, թե այն «հավատացյալը, որը շփվում է մարդկանց հետ և կարողանում է հանդուրժել նրանց վիրավորանքները, ավելի լավն է, քան նա, ով չի շփվում մարդկանց հետ և չի տանում նրանց վիրավորանքները»: Իսլամում ներելու ունակությունը մի կողմից կարելի է ընկալել որպես մեծահոգություն, որ Աստծուց է, մյուս կողմից՝ այն նպաստում է համայնքի կյանքում հավատացյալների միջև եղբայրության, անկեղծության, համաձայնության մթնոլորտի ձևավորմանը: Ներողամտության ձև էր հաշտեցման կոչը: «Եվ իրոք, հավատացյալները եղբայրներ են, այդ իսկ պատճառով հաշտեցրեք ձեր երկու եղբայրներին և վախեցեք Ալլահից, որպեսզի նա օրհնի ձեզ» /49:10/:

Բարեպաշտ մահմեդականների համար կարևոր արժանիք է *հարգանքը,* որ արտահայտվում է տարբեր ձևերով: Ավանդությունը սահմանում է հարգանքի արժանի մարդկանց հերթականությունը. ով է առաջինն արժանի հարգանքի, իսկ ով՝ երկրորդը և այլն: Ալլահի մարգարեն ասել է. «Իրոք, երկրպագությունն Ալլահի հանդեպ արտահայտվում է տարեց մուսուլմանին հարգելով, ինչպես նաև հարգանքն այն մարդու հանդեպ, ով անգիր է արել Ղուրանն ու խախտում է այն՝ հեռանալով նրա սկզբունքներից և արդարացի կառավարիչ է»: Այս հադիսից երևում է, որ հարգանքի արժանի է առաջինը՝ տարեց հավատացյալը, ապա՝ Ղուրանն անգիր իմացողը, այսինքն՝ գիտելիքի կրողը, և վերջապես՝ իշխանության կրողը:

Հավատացյալը պետք է հարգանք ցուցաբերի հավատակիցների և նրանց օջախների նկատմամբ: Արաբական հոգեկերտվածքի համար տուն և ընտանիք գաղափարները չեն տարբերվում միմյանցից: Մուհամմադն արգելում է հավատացյալներին մտնել ուրիշի տուն, քանի դեռ չեն ողջունել տան բնակիչներին և ստացել նրանց թույլտվությունը: Ընդհանրապես, ողջույնի փոխանակումը շատ կարևոր նշանակություն ունի արաբական իսլամական արժեհամակարգում: Հադիսներում պահպանվել են Մուհամմադի հետևյալ խոսքերը. «Ողջունեք նրանց, ում ճանաչում եք և նրանց, ում չեք ճանաչում»: Այս դրույթն անխաթար գործում է այսօր արաբական իսլամական հասարակության մեջ:

Հարգանքի մեկ այլ ձև է *հյուրասիրությունը:* Ավանդության մեջ նշված է. «Ով հավատում է Ալլահին և վերջին օրվան, պատվում է իր հյուրին»: Սահմանվում է պարտադիր հյուրասիրության երեք օր: Իսլամում ոչ մի հավատացյալ չի կարող հրաժարվել իր տուն եկածին հյուրասիրելուց: Բացի այդ, ձևակերպված են հավատացյալի համար պարտադիր յոթ գործողություններ, որոնք արտահայտված են հադիսներում տեղ գտած մարգարեի յոթ պատգամներում. «…այցելել հիվանդին, մասնակցել թաղման արարողակարգին, առողջություն մաղթել փռշտացողին, օգնել թույլին, ձեռք մեկնել նեղության մեջ գտնվողին, ողջունել մարդկանց և նպաստել երդում տվածին երդման իրականացման գործում»:

Ճշմարիտ մահմեդականը պետք է նաև *ջիհադ* մղելու կամք ցուցաբերի: Նա պետք է պատրաստ լինի նահատակվել հանուն իսլամի և իր համայնքի պաշտպանության: Ըստ էության՝ իսլամը չի ընդունում պասիվ վիճակ կամ անգործություն և պահանջում է հավատացյալներից՝ ակտիվ գործողություններ, որն էլ *ջիհադի* ճանապարհն է:

***

Արաբական իսլամական միջնադարյան բազմաթիվ աղբյուրներում պահպանվել են նաև իսլամական հասարակության առաջնորդի կամ գերագույն իշխանության կրողի և, ընդհանրապես, կառավարիչների բարոյական արժեհամակարգի մասին տեղեկություններ: Այս առումով ուշագրավ է թարգմանիչ, արձակագիր, ծագումով պարսիկ Աբդալլահ իբն ալ-Մուկաֆֆայի (8-րդ դար) «Մեծ ադաբ» տրակտատը, որ գրվել է պարսկական սկզբնաղբյուրների հիման վրա: Դրա վրա ակնհայտ է հունական, պարսկական և նույնիսկ հնդկական փիլիսոփայական մտքի և մշակույթի ազդեցությունը: «Մեծ ադաբը» միջնադարյան տրակտատներին հատուկ խրատական-ուսուցողական բնույթ ունի առաջին հերթին պետության ղեկավարների և նրանց ժառանգորդների, պալատականների և բարձրաստիճան պետական պաշտոնյաների համար: Գրքում մեծ ուշադրություն է դարձվում պետության առաջնորդի վարքագծին և կենսակերպին, ինչպես նաև՝ հպատակների հետ նրա հարաբերություններին: Ըստ այդմ՝ առաջնորդը պետք է լինի՝ գործունյա, համեստ, չպետք է շուտափույթ որոշումներ ընդունի հպատակների նկատմամբ, որոնք էլ, իրենց հերթին, պետք է լինեն հնազանդ, բայց և թույլ չտան, որ իրենց նվաստացնեն: Առաջնորդը չպետք է ընդգծի, թե ամենակարող է, չպետք է ստի, ժլատություն ցուցաբերի, քինախնդիր լինի, նա չպետք է երդումներ տա, քանի որ այնքան արդարադատ պետք է լինի, որ ոչ ոք չկասկածի նրա խոսքերի արժանահավատությանը: Առաջնորդը պետք է ունենա խորհրդականներ, որոնք պետք է բացառիկ իմաստուն լինեն և իրենց խորհուրդներով փորձեն առաջնորդին զերծ պահել սխալ ու անարդար քայլերից:

***

Ուշագրավ է, թե որոնք են բարեպաշտ մահմեդականի վարքականոնի բնորոշ հատկանիշներն այսօր, 21-րդ դարում: Անառարկելի է այն փաստը, որ 13 դարերի ընթացքում իսլամը չի սպառվել և պահպանում է իր կենսունակությունը: Հիմնականում իսլամով են պայմանավորված մահմեդականների կենսակերպը, աշխարհընկալումը, բարոյականության տարբեր կողմերը:

Ներկայումս արաբական իսլամական համայնքում գործում են կայուն չափորոշիչներ, որ ավելի շատ կրոնական բնույթ ունեն և գրեթե փոփոխության չեն ենթարկվել: Այսինքն՝ այն բոլոր հատկանիշները, որոնց մասին խոսեցինք, պահպանվում են մեր օրերում ևս:

Ճշմարիտ մուսուլմանը պետք է օրը հինգ անգամ աղոթի, Ղուրան

կարդա, ռամադան ամսին ծոմ պահի, բարեգործությամբ զբաղվի, ֆինանսական և ֆիզիկական հնարավորությունների դեպքում՝ ուխտի գնա սրբազան վայրեր (ինչը միանշանակ կմեծացնի նրա կշիռը հասարակության մեջ որպես *հաջջի):* Բարեպաշտ մահմեդականն իրավունք չունի խախտել իսլամով ամրագրված սկզբունքները թե՛ հասարակական կարծիքի և թե՛ իսլամական իրավունքի տեսանկյուններից: Առավել կրոնականացված հասարակություններում ծանր հետևանքներ կարող է ունենալ կրոնական հիմնական պարտականություններից (մասնավորապես՝ աղոթքի կամ ծոմապահության) որևէ մեկի հրապարակային խախտումը:

Բարեպաշտ մահմեդականի բարոյական նկարագիրն առավել ցայտուն կլինի, եթե նա զբաղվի նաև *դավայով*՝ այսինքն՝ իսլամի քարոզչությամբ և անհավատներին ճշմարիտ հավատքին՝ իսլամին դարձի բերելով, որ աստվածահաճո գործ է:

Մուսուլմանի բարոյական նկարագիրը կարող են խաթարել մի շարք իրողություններ: Ասենք՝ եթե նա ալկոհոլային խմիչքներ օգտագործի, խոզի միս ուտի, մոլեխաղերով, սիրաբանություններով կամ վաշխառությամբ զբաղվի, ռամադանի ծոմը խախտի:

Փաստորեն, մահմեդականի վարքականոնն անմիջականորեն կապված է կրոնական չափորոշիչների հետ: Սակայն կան նաև այլ, ոչ կրոնական գործոններ, որոնք բարեպաշտ մուսուլմանի բարոյական նկարագրի մասն են կազմում: Այս տեսանկյունից՝ կարևոր է առաջինը արու զավակ ունենալու հանգամանքը, որ պատվաբեր է: Ոմն Իբրահիմի առաջին որդին ունենալուց հետո կսկսեն կոչել որդու, ասենք՝ Ահմադի անունով (Աբու Ահմադ՝ Ահմադի հայր): Մուսուլմանի անունն այդ ձևակերպմամբ ավելի հեղինակավոր է, և շատ անգամ նրա իսկական անունը մոռացության է մատնվում ընտանիքում ու շրջապատում:

Ճշմարիտ մուսուլմանի բարոյական նկարագրին մեծ շուք է հաղորդում, եթե նա սերում է Մուհամմադի ցեղից: Նման անձանց կոչում են *սեյիդ:*

***

Ինչպե՞ս է իսլամական միտքը վերաբերվում նրանց, ովքեր խախտել են բարեպաշտ մահմեդականի բարոյական նկարագիրը: Այս հարցը դեռևս միջնադարում առաջ քաշեցին իսլամական իրավական կրոնական դպրոցները, բազմաթիվ մուսուլման տեսաբաններ, իսկ բանավեճը հարցի շուրջ շարունակվում է նաև մեր օրերում:

Բարեպաշտ մուսուլմանին անհավատության մեջ մեղադրելը, նրա բարոյական նկարագիրը կասկածի տակ դնելը հիմնավորվում են *թաքֆիրի* տեսությամբ: Որոշ մուսուլման տեսաբանների կարծիքով՝ մահմեդականը

չպետք է շարիաթն ընդունի մի մասով, այլ՝ ամբողջությամբ: Հակառակ դեպքում նա դառնում է հավատուրաց՝ *մուրտադ,* որն ավելի վատ է, քան անհավատը կամ հեթանոսը, և որի միակ պատիժը մահն է:

Այսօր *թաքֆիրի* գաղափարը լայնորեն օգտագործում են իսլամական արմատական կրոնաքաղաքական կազմակերպությունները, որոնք իրենց գործելակերպը ներքին թշնամիների դեմ հիմնավորում են հենց այդ թեզից ելնելով: *Թաքֆիրի* մեջ կարող են մեղադրվել իսլամական պետության այն առաջնորդները կամ բարձրաստիճան այրերը, որոնք իսլամական կառավարումը փոխարինում են «անաստված» օրենքներով, այսինքն՝ չեն առաջնորդվում շարիաթով և իսլամական սկզբունքներով, չեն հետևում իսլամական բարոյականության նորմերին: «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության տեսաբան Սեյիդ Կուտբը նույնիսկ առաջարկում էր ոչնչացնել ոչ միայն նման մուսուլման առաջնորդներին, որ հավատուրաց են, այլ *հավատուրացության* մեջ թաղված և անաստված ղեկավարին հանդուրժող իսլամական հասարակություններին:

Եգիպտական «Ալ-Ջիհադ» կրոնաքաղաքական կազմակերպության տեսաբաններն ունեն մուսուլման առաջնորդի սեփական պատկերացումները: Ապագայի համաիսլամական պետության՝ խալիֆայի մասին «Ալ-Ջիհադի» տեսակետը. խալիֆա կարող է դառնալ յուրաքանչյուր տղամարդ մուսուլման, ով առողջ բանականություն ունի, տիրապետում է կրոնական գիտելիքին, քաջ է, արդարադատ, կառավարման գործում՝ հմուտ, ծագումով՝ Մուհամմադի ցեղից: